ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ք.Եղեգնաձոր 23 նոյեմբեր 2022թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստի

Նիստը վարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյանը: Նիստի աշխատանքներին մասնակցում են հանձնաժողովի 11 անդամներից 10-ը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> 2023 թվականի տարեկան ծրագիրը /Դ.Սարգսյան/:
2. ՀՀ կառավարության հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված որոշումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում /Ց. Բաբայան/:
3. Քննարկումներ:

ՀՀ Վայոց ձորի մարզի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> 2023 թվականի տարեկան ծրագիրը ներկայացերեց հանձնաժողովի նախագահը: Մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Խաչատրյանը առաջարկեց տարեկան ծրագրի 11.1 կետով սահմանված՝ <<Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, տեղեկատվության փոխանակության հնարավորության ապահովման>> գործընթացում ներգրավել մարզի բոլոր իրավասու կառույցներին՝ հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աջակցության ծրագրերում ընդգրկելու համար:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 11.08.2022թ. N1265-Ն <<Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին>>, 11.08.2022թ. N1264-Ն «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» որոշումները, պետական հավաստագրի հիման վրա աջակցող միջոցների տրամադրման գործընթացը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ անհատական սոցիալական կարիքներին համապատասխան տնային պայմաններում խնամքի ծառայությունների մասին:

Հայկական կարմիր Խաչի ընկերության Վայոց ձորի մարզային մասնաճյուղի գործադիր տնօրեն Ս.Հովհաննիսյանը ներկայացրեց հաշմանդամություն ունեցող անձանց տնային

պայմաններում խնամքի ծառայությունների նկարագիրը, խնամք ստացող անձանց թիվը, առաջիկա անելիքները:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> 2023 թվականի տարեկան ծրագիրը:
2. Քննարկումներ կազմակերպել համայնքների սոցիալական ոլորտի աշխատողների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյան
Քարտուղար Ց.Բաբայան